

Ը

Ս. ՅՈՎԱԿԻՄ - ԱՆՆԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

(Ի Պրոպատիկէ, Յովն. Ե. 2)

Պրոպատիկէի անդամալուծին բժշկութեան պատմութիւնը ծանօթ է Աւետարանէն (Յովն. Ե. 2-17). Պրոպատիկէն՝ Տաճարին մօտիկ դրան մը անուէն է, որ կը կոչուի նաև «Ոչխարաց դուռն»: Աւետարանի այդ համարը պէտք է կարգալ այսպէս. «Եւ էր յԵրուսաղէմ, ի Պրոպատիկէ աւազան, որ կոչուի երբայեցերէն Բեդհեզգա, հինգ սրահ»: Յիսուսի գործած սքանչելեաց ի յիշատակ, քրիստոնէութեան նախկին դարերուն, Պրոպատիկէի մէջ շինուեցաւ եկեղեցի մը, յանուն Ս. Աստուածածնի մօր՝ Աննայի: Ս. Կուսի ծննդեան տեղը որոշելու համար բաւական վէճեր եղած են, և զանազան աւանդութիւններ կան, կը կարծուի թէ ան ծնած է ի Նազարէթ կամ ի Բեթղհէմ, բայց այս վարկածները ա՛յնքան չեն զօրաւոր, որքան արեւելեան ա՛յն աւանդութիւնը՝ որուն համաձայն կը վկայուի որ Ս. Կոյսը ծնած է յԵրուսաղէմ, իր մօրը Աննայի տան մէջ, Պրոպատիկէի մօտ, այդ պատճառաւ ա՛յն եկեղեցին՝ որ շինուեցաւ Պրոպատիկէի մէջ, անուանակոչուեցաւ Ս. Աննա: Թողլով մերձաւոր ժամանակի վկայութիւնները, մէջ կը բերենք աւելի հինները՝ որոնք են Սեբաստացի Պետրոս Եպս.ի (Դ. դար), Վրացի Պետրոս Եպս.ի (Ն. դար) յիշատակութիւնները, ասոնցմէ զատ Երուսաղիմայ Պատրիարք Սօփրոնիոս (Է. դար), Յովհաննէս Դամասկացի (Ը. դար) իրենց քերթուածներով և քարոզներով կը հասկցնեն թէ՛ Ս. Կոյսը ծնած է ի Պրոպատիկէ, և հոն է անոր մօր՝ Աննայի տաճարը, որ կոչուած է նաև Անդամալուծին եկեղեցին:

1. Ս. Յովակիմ-Աննայի եկեղեցւոյ պատմութիւնը.

Ս. Յովակիմ-Աննայի եկեղեցւոյ մասին ամէնէն հին վկայութիւնները հոս պիտի յիշենք. հինգերորդ դարուն վերջերը Վերդիլիոս և վեցերորդ դարու առաջին քառորդին Անտոնինոս